

ՍՈՒՇԻ ԵՎ ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՂԱՄ ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԻՏԱԿԵՏՈՒՄ

Բանալի քառեր՝ Գեղամ Տեր-Կարապետյան, Սրվանձտյանց, ժառանգություն, ժողովրդագիտական, բանահյուսական, ազգագրական, Տարոն, Մուշ, արխիվ, ժանր:

Keywords: Gegham Ter-Karapetyan, Srvandztyants, heritage, ethnological, folklore, ethnographic, Taron, Mush, archive, genre.

Հոդվածում ներկայացված է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արևմտահայ նշանավոր գրագետ, հանրային գործիչ և բանահավաք Մշո Գեղամի կյանքի ուղին ու գործը: Եթե Տարոն աշխարհի զավակի ազգանվեր գործունեությունն ու գրական ժառանգությունը մասամբ բացահայտված են նվիրյալ պատմաբանների և գրականագետների շնորհիվ (Պետրոսյան Հ. «Գեղամ Տեր-Կարապետյան, Մշո Գեղամ», «Գեղամ Տեր-Կարապետյան», Տեր-Մինասյան Ա. «Տատրակ կամ Մշոյ Գեղամ. Վերահաս աղետի մը արթուն դիտորդը», Հայրիյան Լ. «19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արևմտահայ հեքիաթագրությունը (Թվատինցի, Մշո Գեղամ, Զարդարյան)», Բադայան Գ. «Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը մեծ եղեռնի նախօրեին»), ապա բանահավաք Գեղամն ու նրա գրառած ժողովրդական նյութը մնացել են ստվերում, պատվել մոռացության փոշով:

Հոդվածի նպատակն է բացահայտել վերոհիշյալ ժամանակաշրջանի արևմտահայ նշանավոր ազգային գործչի, հեղափոխականի և երեսփոխանի, գավառական գրական հոսանքի նշանավոր անդամի և, որ չափազանց կարևոր է, Գ. Սրվանձտյանց բանահավաքի հավատարիմ և արժանավոր հետևորդի դիմագիծն ու ժառանգությունը:

Գեղամ Տեր-Կարապետյանը ((1866-1918), Մշո դաշտ, գյուղ Խեյալյան) գրական շրջանակներին առավել հայտնի է Մշո Գեղամ գրչանունով: Նա ստեղծել է ժողովրդական բանահյուսության ենթաշերտերի ու լեզվամտածողության հենքով գոյավորվող գրականություն, հեղինակել ազգագրական, բանագիտական, տեղագրական, կրոնական և հրապարակախոսական հոդվածներ՝ թողնելով հարուստ ժառանգություն, սակայն առայսօր ազգագրագետների ու բանագետների պատշաճ ուշադրությանը չի արժանացել և գիտական շրջանառության մեջ չի դրվել նրա ազգագրական ու բանահյուսական բազմաժանր գրառումների մեծ մասը (հեքիաթներ, առած-ասացվածքներ, երգեր, ավանդազրույցներ, «Մշո գաւառական լեզուի բառեր», որը բարբառային բառերի, ասույթների և առածների հավաքածու-բառարան է՝ մոտ չորս հարյուր էջանոց աշխատություն և այլն), իսկ գրական ստեղծագործությունները թեև ժողովրդագիտական սկզբնաղբյուրների արժեք ունեն, սակայն դրանց նվիրված փոքրաթիվ ուսումնասիրություններում շրջանցվել են ժողովրդագիտական շերտերը:

Բայց նախ պարզենք, թե ով էր Գեղամ Տեր-Կարապետյանը, ինչ կարևորություն ունի նրա կյանքի և գործի ուսումնասիրությունը: Մի մարդով մշեցու, հայ մարդու կենսական և իրավական իրավունքների պաշտպանությունը դարձրել էր իր կյանքի գործը, իր գերնպատակն ու առաքելությունը: Բավական է հիշատակել միայն նրա «Հողային հարցը հայաբնակ նահանգներում մեջ» աշխատությունը (1911 թ. Կ. Պոլիս), որը հեղինակի կենդանության օրոք առանձին հրատարակված միակ գրքույկն էր, և Ռուբեն Զարդարյանի կողմից գնահատվել էր «որպես հակիրճ, բայց ամբողջական խտացումը հայ կյանքին արդի ամենեն հրատապ հարցին» [Պետրոսյան, 2012, 109]: Գեղամը բարձրացնում է հողային այն ահռելի խնդիրները, որոնք հրատապ էին իր հողի վրա հազարամյակներ ապրող և իր իրավունքները պաշտպանող ժողովրդի համար: Ժողովրդի ցավերով ապրող նվիրյալի, մտավորական-գրողի, հրապարակագրի, հասարակական գործչի և Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Գեղամի խոսակցության ու անհանգստությունների միակ նյութն, ինչպես նշում է Օտյանը, Մուշն էր

«գիւղացիներուն վիճակը, էշրաֆներու բռնութիւնները, կառավարութեան ընթացքը, տնտեսական խեղճութիւն, կրթական խեղճութիւն, հողային յափշտակութիւն, գուլում...» [Օտեան, 1913, 119]:

1888 թ. Սրվանձտյանցին ուղղված նամակներից մեկում խոսելով համատարած անտարբերության և մի քանի հայրենանվեր անձնուրացների մասին՝ Գեղամն ակամա բնութագրում է նաև իր սկզբունքներն ու կյանքի ուղին. «Անտարբերությունն մը միայն կտեսնեմ իմ չորս դին, անտարբերություն մը, այո՛, ոչ թե ուրիշ պատճառով, այլ դա մի սովորական հատկություն է մարդոց՝ մեր հայրենակցաց, մտածել ավելի այն նյութերու վրա, որ անմիջական առնչություն ունին իրենց կյանքին ու գործոց հետ, չեմ մոռնար ըսելու թե բացառություններ էլ կան, որք կորոնին ավելի բարձր և հանրային շահեր...» [Պետրոսյան, 1977, 194]:

Գեղամը Սրվանձտյանի սանն (Սրվանձտյանցի սանն է եղել Մշո Սուրբ Կարապետ վանքին կից ժառանգավորաց վարժարանում) ու հետևորդն էր, ուստի իր մեծ ուսուցչին համարում էր հայ ժողովրդի բարոյական հացի մատակարարն ու ժողովրդական համակրանքին և երախտագիտությանն արժանի գավակը [Պետրոսյան, 1977, 182]:

Ժողովրդական պատկերավոր մտածողությանը Գեղամ Տեր-Կարապետյանը ծանոթանում է դեռևս մանկության տարիներին՝ հեքիաթասաց Շիրո ջոջիկից [Պետրոսյան, 1983, 267]:

Ինչպես դիպուկ նկատում է Անահիտ Տեր-Միինասյանն իր «Տատրակ կամ Մշոյ Գեղամ. վերահաս աղէտի մը արթուն դիտորդը» հոդվածում. «Գեղամ կարդացած է Սրուանձտեանցի *Գրոց-Բրոց*ը, որ իրեն համար կը մնայ օրինակելի աշխատութիւն» [Տեր Մինասեան, 2017, 70]: Ուստի, հետևելով իր հոգևոր ուսուցչի օրինակին, նա նվիրվում է բանահավաքչական աշխատանքին՝ գրառելով Տարոն-Տուրուբերանի, Մշո դաշտի, Մասունի, Բուլանքի, Վարդոյի, Գինջի և Տիգրանակերտի ազգագրական, վիպական, քնարական ու ասույթաբանական բանահյուսության բազմաժանր և արժեքավոր նյութերն ու թողնում բանահավաքչական հարուստ ժառանգություն՝ հեքիաթներ, ժողովրդական երգեր, հարսնագովքեր և փեսայագովքեր, պարերգեր, առած-ասացվածքներ, հանելուկներ և առակներ, տեղեկություններ ժողովրդական նախապաշարմունքների վերաբերյալ, մանկախաղեր ու զրույցներ, աշուղական սիրավեպեր և այլն (Մշո Գեղամի ֆոնդ, ԳԱԹ): Ծանոթանալով ժողովրդի ստեղծագործ միտքը ներկայացնող Մշո Գեղամի արխիվային ժառանգությանը՝ վստահորեն կարելի է պնդել ժողովրդագիտական նյութի հարստության, բազմաժանրության, ծանոթագրությունների և դիտարկումների մեծարժեքության մասին: Իհարկե, Գեղամ Տեր-Կարապետյանի ժառանգությունն ամբողջովին անտիպ չէ, հատկանշական է, որ հրապարակումները նույնպես ժողովրդագիտական հարուստ նյութ են պարունակում:

«Մշո մուրատատուր Ս. Կարապետ. իր գրոց ու բրոց բանկլիկը» մոտ 1500 էջանոց աշխատության մեջ, որն ամբողջությամբ նվիրված է Մշո Ս. Կարապետ վանքին, այդ թեմի մեջ մտնող վանքերին, պատմական անցքերին ու վանահայրերին, դպրությանն ու ավանդություններին, Գեղամն անդրադառնում է նաև ձմեռային երեկոներին գյուղական օդաներում, աշխարհիկ-ռամկական հեքիաթներից ու զրույցներից բացի, կռասներին, վանքերի, եկեղեցիների, սրբերի, նրանց մասունքների, զանազան հրաշագան անցքերի մասին պատմվող ավանդություններին, հեքիաթ-զրույցներին, որոնք իր պատանեկան տարիների քաղցր վերհուշը կարելի է համարել [Տեր-Կարապետյան, 2000, 45-56]:

Հարուստ ժողովրդագիտական նյութ է պարունակում «Տարօնի վանքերը. ուղեւորի յիշատակներ» գիրքը, որտեղ հրապարակվել են Գեղամի մեծաթիվ հոդվածները՝ նվիրված Ս. Կարապետ, Ս. Հովհաննես, Եղորդուտի, Ս. Սարգիս վանքերին, Եղեսիայի, Դիարբեքիի եկեղեցիներին, տարբեր սրբավայրերի շուրջ հյուսված և կենցաղավարած նվիրական ավանդություններին, ժողովրդական հավատալիքներին, հայերի և քրդերի կենցաղին ու սովորություններին [Տեր Կարապետեան, 2003, 143]:

Ուշագրավ է, որ նույնիսկ հորը նվիրված «Տերտերին մահը» վերհուշում Գեղամը ժողովրդագիտական կարևոր տվյալներ է փոխանցում ընթերցողին, ինչպես օրինակ. «Մեծօրեից՝ աւանդութեամբ՝ շինականք պէտք կը տեսնեն, որ նոր գերեզմանատան մէջ՝ ամենէն յառաջ՝ անպատճառ քահանայ մը թաղուի, որպէս զի հողը օրհնուի, սրբանայ ու նուիրական ըլլայ: Հակառակ մերիններու եւ միամիտներու ընդդիմութեան թէ մինակ ու մալուլ թողելու չէ

քահանային գերեզմանը, ես հաւանեցայ սակայն գիւղացիներու անկեղծ ու բարեմիտ առաջարկութեան» [Գեղամ, 1902, 484]:

Գեղամին գրավում էին հայրենի ավանդությունները, որոնց նվիրել է «Իննականեաց մեհեանները եւ Նաւասարդի տօնը Տարօնոյ մէջ» աշխատությունը [Վարուժան, Սիրունի, 1914, 148-157]:

Անկրկնելի են ժամանակի մամուլում նրա հրապարակած՝ «Շահմարա՞ն թէ Շամիրամ», «Խորենացին. իր ջաղացքն ու ջըխջըխիկը», «Կարինէն» և այլ ավանդազրույցները, որոնք բանահյուսական բացառիկ նմուշներ են՝ ներկայացված հյութեղ խոսքով, տեղացու փայլուն իմացությամբ: Բանահավաքը գիտակցում և արժեւորում էր իր գրառած և հանրայնացրած պատումները, դրանց մեծ մասի սկզբնաղբյուրային նշանակությունը (որոշ պատումներ, ինչպես՝ «Շահմարա՞ն թէ Շամիրամ» (Բիւզանդիոն, 1900), «Վարդ-խաղը» (Ազատամարտ, 1911) չեն հանդիպում այլ բանագետ-բանահավաքների գրառումներում): «Թէ՛ այս, թէ՛ շրջակայ գիւղերու մէջ զանազան աւանդական պատմութիւններ կ'գտնուին հնասէր ժողովրդեան մօտ, որոց մէկն հետեւեալն է ու կ'վերաբերի Շամիրամին ծագման եւ ինչ ինչ գործերուն: Բանասերներու համար նուազ հետաքրքրական չափտի ըլլայ կարծեմ» [Տէր Կարապետեան, 1900, 1]: Հնագույն հավատալիքների յուրօրինակ անդրադարձ է «Ոսկեճանկը» հեքիաթատիպ-ավանդության գեղարվեստական մշակումը, որն ըստ Մշո Գեղամի վկայության, ասվել է չափածո՝ պարսկերէն և քրդերէն: Ավանդության հիմքում ընկած է մարդկային հոգու կերպարափոխման և քնած ժամանակ հոգին մարմնից անջատվելու նախնական հավատալիքները: Ժողովրդական պատկերացումներում մեռնելիս կամ քնի ժամանակ մարմինը թողած հոգին հիմնականում բերանից (Գեղամի մոտ քնած հովվի քթից) է դուրս գալիս և կարող է տարբեր տեսանելի կերպարանքներ ընդունել [Գեղամ, 1899, 12-24]: Բանահյուսական արժեքները ոչնչացումից փրկելու և գեղարվեստական խոսքն առօրեա ժողովրդախոսակցական բառամթերքով խտացնելու միտումով՝ արձակագիրն իր երկերում լայնօրէն օգտվել է ժողովրդական առած-ասացվածքներից, թևաւոր խոսքերից ու դարձվածքներից (Գեղամի արխիվում պահվում է ժողովրդական ասույթաբանության մի հարուստ շտեմարան, որտեղ բանահավաքի գրառումների կողքին տեղ են գտել նաև արժեքավոր նշումներ և մեկնություններ) [Մշո Գեղամի ֆոնդ, ԳԱԹ]:

Գեղամի ստեղծագործությունները մասնակիորեն ամբողջացվելով հրապարակվել են 1931 թ. Փարիզում՝ «Տարօնի աշխարհ. պատկերներ ու պամուածքներ» խորագրով, որի գրախոսականում «Սիրունի» 1932 թ. մայիսյան համարում գրախոսը, (Ն.Վ.Պ.), կարևորելով Գեղամի երկերում ամբարված բանահյուսական և ազգագրական նյութը, գրում է. «Հայ ազգագրութեան ու ռամկագիտության համար պիտանի բաւական հում նիւթ կը պարունակէ այս հատորը...» թվելով այդ ստեղծագործություններից մի քանիսը [Ն.Վ.Պ., 1932, 152]:

Հեքիաթ որակող «Մէկ ու ճար Շուշիկն» իր կառուցվածքում ներառում է հեքիաթի բաղադրատարրեր, որտեղ զգալի է բանահյուսությունից արտածված հոսքը, սակայն ստեղծագործությունը ժանրային խաչաձևումների արդյունք է, որտեղ առկա են ժողովրդական հեքիաթներին բնորոշ ավանդական կայուն բանաձևեր, լեզվադարձվածային կայուն կաղապարներ («ժուռ-ժամանակ»), ասույթաբանական ժանրի ինքնատիպ դրսևորումներ («Աղուէսին քառտուն առակներ կան, բոլորն էլ տանձին վրայ են», «Ուր կողովի տակ չի մնար, ոչ էլ սերը՝ սրտանոցին մէջ»), ժողովրդական լեզվամտածողությանը բնորոշ երդումներ («Թող մէկիկ Աստուածն ու սուրբերն Սիփնայ Պլեճնայ վկայ մնան», «ապրիմ քումն եմ, մնամ հողերուն...»), անեծքներ («Իսկ իմ ուրաղ չառնէ քու սիրտը», «քանզ Ադամ մերկ, քանզ օձն անօթի իյնես», «քու անկողին փուչ, քու բարձն տատաշ եղնի», աղօթքներ՝ «Եաման մուրատատուր Ս. Կարապետ, դու որ ամէն նեղածին կրհասնիս, ընծի էլ հասիր, սիրտս կոտրուկ է, թեւերս թափուկ է ...»): Գեղամը քայլ առ քայլ ներկայացնում է հմայական ծես՝ թուրթ գրելու գործընթացը, և հմայական խոսքեր, որոնք արտաբերում է տիրացու Մկրտն: Այսպիսով, Գեղամն իր հեղինակած հեքիաթում անդրադարձել է Բլեջան լեռան շուրջ հյուսված ավանդազրույցներին, հայրենի Բուլանըխի գավառաբարբառում գոյատևած հնագույն հավատալիքների տարբեր արտահայտություններին՝ ցանկության խոսքերին (հմայական ասույթներ, անեծքներ, օրհնանքներ ու երդումներ), հեղինակային հեքիաթը վերածելով անեծքի հմայական գորությունը հավաստող

ստեղծագործության, քանի որ «արդարացի անեծքն», ըստ ժողովրդական ընկալումների, իրականանում է [Պապիկեան, 1907, 117-120]:

Գեղամ Տեր-Կարապետյանի կենդանության օրոք և ավելի ուշ հրապարակված գրական ստեղծագործություններից, բանահյուսական և ազգագրական հում նյութից, ինչպես նաև ժողովրդական նյութի մշակումներից գատ, ԳԱԹ-ում և Բեյրութի (Լիբանան) Համազգայինի Մելանքթոն և Հայկ Արալանյան ճեմարանում պահպանվում է նրա անտիպ ժառանգությունը, որը դրվելով գիտական շրջանառության մեջ՝ կարող է ամբողջացնել Տարոնի ժողովրդագիտական ժողովածուները և հարստացնել պատմազգագրական այդ շրջանի մասին ունեցած մեր գիտելիքները: ԳԱԹ-ում պահվող Մշո Գեղամի ֆոնդը հարուստ և ընդգրկուն է ասույթաբանական, երգային (հարսանեկան երգեր) և վիպական բանահյուսության ստեղծագործություններով, ժողովրդական խաղերով (մանր ճիժերու խաղեր) ու զրույցներով, որոնք հաճախ կա՛մ Տարոնի Մուշ-Բուլանըխի բանահյուսական ժողովածուներում տեղ գտած ժողովրդական ստեղծագործությունների տարբերակներ են, կա՛մ բացառիկ նմուշներ: Բացառիկ է նաև Գեղամի կազմած «Աշըգնամեն», որը բովանդակում է շուրջ երեք տասնյակի հասնող աշուղների անձնանուններ ու նրանց մասին պատմող զրույցներ (Աշըղ Պաղտասար, Աշըղ Դավիթ, Աշըղ Այվազ Տիվրիցի և այլք), ինչպես նաև «Մեյմո ու Զինե» քրդական հեքիաթ-սիրավեպը: Ուշագրավ է ժողովրդական առածների և դրանց մեկնությունների շարքը, ինչպես օրինակ՝ «Ասուծ, Ասուծ է, ինչ կնիկ մարդ՝ ինչ իրիկ մարդ է», որը Գեղամը մեկնում է՝ «Քաջն քաջ է, ինչ կնիկ է, ինչ մարդ է, միննոյն բան է», կամ «Մարագ ըսաւ յարդս մի տանի, բիրիլդ պետք չէ ինձի», «Մարդ ողորմած վանքի դուռ աղքատ կանգնած»: Հարուստ է նաև Գեղամի գրառած հեքիաթաշարը, որը ժողովրդական հնագույն հավատալիքների, առասպելական մտածողության հարուստ շտեմարան է: Ուստի Գեղամ Տեր-Կարապետյանի գրեթե չուսումնասիրված ժառանգությունը հույժ կարևոր է կորուսյալ աշխարհի համապատկերը ամբողջացնելու և Գեղամ Տեր-Կարապետյանի հայրենասերի գործը հանրայնացնելու համար:

SUMMARY

The almost unexplored legacy of Gegham Ter-Karapetyan is important for completing the overview of the world of Taron and is absolutely worthy of scientific examination, since the collector was the bearer and connoisseur of that material.

The handwritten legacy of Msho Gegham, the self-made dialect dictionary stored in his fund, indicate a perfect knowledge of the Mush dialect, and the recorded ethnographic and folklore material, comments and notes are extremely important for modern scientists and ethnographers. Meanwhile, the name of Gegham Ter-Karapetyan is not even mentioned alongside other Armenian folklorists, although he was a student of G. Srvandztyants and a worthy follower of his teacher.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գեղամ Տերտերին մահը // Մասիս, 1902, 51-րդ տարի, թիւ 30, էջ 484:
2. Գեղամ Շահմարա՛ն թէ Շամիրամ // Բիւզանդիոն, Կ. Պոլիս, 1900, Դ տարի, թիւ 999, էջ 1:
3. Գեղամ Ոսկեճանկը // Բիւզանդիոն, Կ. Պոլիս, 1899, Գ տարի, թիւ 826, էջ 1:
4. Ն.Վ.Պ. Տարօնի աշխարհ. պատկերներ ու պատմածքներ // Սիոն, Երուսաղեմ, տպ. Սրբոյ Յակոբեանց, հ. Զ, N 5, 1932, էջ 152:
5. Պապիկեան Ն., Տարեցոյց, Կ. Պոլիս, Յ. Մատթէոսեան հրատ., 1907, Գ. տարի, 122 էջ:
6. Պետրոսյան Հ., Գեղամ Տեր-Կարապետյան // Էջմիածին, Էմիածին, Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի հրատարակչություն, 2012 հ. ԿԸ, N Ը, էջ 107-119:
7. Պետրոսյան Հ., Գեղամ Տեր-Կարապետյան, Մշո Գեղամ, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, 292 էջ:
8. Պետրոսյան Հ., Մշո Գեղամի նամակները Գարեգին Սրվանձտյանցին // Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, ԵՊՀ հրատ., 1977, 1 (31), էջ 181-196:
9. Վարուժան Դ., Յակոբ Սիրունի Յ., Նաւասարդ տարեգիրք, Կ. Պոլիս, տպ. Օ. Արզուման, 1914, 221 էջ:

10. Տէր Կարապետեան Գ., Տարօնի Աշխարհ, Պատկերներ ու Պատմութիւններ, Փարիզ, Printed in France, 1931, 340 էջ:
11. Տէր Կարապետեան Գ., Տարօնի վանքերը: Ուղեւորի հիշատակներ, Երևան, Մուղնի, 2003, 357 էջ:
12. Տէր Մինասեան Ա., Տատրակ կամ Մշոյ Գեղամ. Վերահաս աղէտի մը արթուն դիտորդը // Բագին, 2017, ԾԶ. ՏԱՐԻ, ԹԻԻ 2, էջ 70-85:
13. Տէր-Կարապետեան Գ., Մշո մուրատատուր Ս. Կարապետ. իր գրոց ու բրոց բանկիկը // Էջմիածին, Էմիածին, Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի հրատարակչություն, 2002, հ. Դ, N ԾԸ, էջ 45-56: